

## ԺՈՂՈՎՐԴԵՅԱՆ ԳՐԵԿՆՈՒԹԻՒՆԻՑ

(Բառգիրք «Արարատեան ըարքառի»  
գրքի առիթով):

Ազգեր կան, որոնք իսպառ անհետացել են այսարհից, բայց նրանց գիրը և գրականութիւնը մնացել է, նրանց բնաւորները և սեպագրերը ոչ միայն բաց են անում պատմութեան առաջ այդ ազգերի կեանքը, այլ և ընդհանուր մարդկութեանը և գիտութեանը մեծամեծ ծառայութիւն են անում: Հասարակական գիտութիւնները շատ անգամ ժողովրդական առակների, հէքիաթների, սովորութիւնների և դարձուածքների մի նախադասութիւնից և ոճից այնպիսի եզրակացութիւններ անում և այնպիսի խնդիրներ են լուսաբանում, որոնք դարերէ ընթացքում մութն և անհասկանալի են եղել: Այս պատճառով ժողովրդական բանաւոր գրականութեան նշխարների ժողովողի կատարած գործը շատ պատկառելի է և գրագէտ մարդկանց համար հաճելի: Տիգրան Նաւասարդեանը արդէն պատուաւոր տեղ ունի բունած մեր Կովկասեան գրականութեան մէջ իբրև հայ հէքիաթների, առակների, ասածների և առհասարակ բանաւոր գրականութեան նիւթեր ժողովող: Այս ուղղութեամբ նրա հրատարակած գրքերի թիւը տասնից աւելի է:

Թէև մենք անձամբ չառ վաղուց ենք հեռացել բուն երկրից և այս պատճառով ձեռնհաս չենք համարում մեզ պ. Նաւասարդեանի բառգրքի մանրամասն քննադատութիւնը տալ, սակայն աւելորդ չենք համարում նկատել այս հրատարակութեան մի քանի թերութիւնները, որոնք սպազայում կարող են ուղղուել աշխատասիրողի կողմից:

Ընդհանրապէս առած բառգիրքը պարունակում է գլխաւորապէս Վաղարշապատ գիւղի ժողովրդի մէջ դործածական ոճերը, բայց չի կարելի ասել, որ այս բառարանը լիակատար լինի: Նախ բազմաթիւ բառեր և ոճեր վրիպել են բառարան:

կազմողի ուշադրութիւնից, յետոյ շատ բառեր չեն բացատրուած այն բոլոր գործածական դարձուածներով, որոնք ժողովրդի մէջ ընդունուած են, երբորդ շատ բառերի և դարձուածքների միտքը կամ սխալ են բացատրուած և կամ լիակատար չեն մեկնած: Թուուցիկ կերպով կարգալիս միայն մենք կարողացանք վերոյիշեալ թերութիւններից մի քանիսը նկատել, որ և կախատեմք ցոյց տալ, բայց այս բառարանը այնքան կարևոր գիրք է, որ արժէր ստուգել և լրացնել նրան բուն տեղում:

Բաց թողած բառերից ես յիշեցի օրինակ՝ *ճլպատի*—աչքերը ճլպատին ա տալիս—ազահարար մի բան փնտուում է, *փնթի* (անմաքրասէր), *ըոխշա* (կապոց), *դեղապտի* (հիւանդի ուզած կամ խնդրած բան, նոյնպէս ևս հազուադիւր բան), *քեօնդալան* (ծուռ ու մուռ, անհարթ, անկանոն տեղ, նոյնպէս և փոխաբերական մտքով ասում են՝ ինչ ես քեօնդալան մօնդալան գլխիցդ դուս տալիս), *քեչա* (թաղիք), *Ֆլանքեասը* (այս ինչ սքը), *երկուֆոքիս* (յղի), *հայտալ* (ստիպել), *սրդաշ* (մտերիմ) և այլն: Այս բառերը, որ Վաղարշապատում շատ սովորական բառեր են, բոլորովին չկան բառարանում:

Այժմ ես կախատեմ թուել այն խօսքերը և ոճերը, որոնք կամ սխալ են բացատրուած կամ թերի:

*Փոտ խօսքի հետ բազմաթիւ ոճեր կան.* օրինակ ասում են—անֆոտ ծաղիկ ես, որ ասել է անպէտք, անկարեկից և անօգտակար մարդ ես: *Ազի* ոչ միայն մայր է, այլ և հօրեղբոր կնոջը ազի են ասում: *«Աղօթարանը վկայ»* ոճը երգում է, որ նոյնպէս պակասում է բառարանում: *Ատամները առնել պարբերութիւնը* ունի և փոխաբերական միտք:—*Նրա ատամներն առաւ, կնշանակի վնասուեց:* *Նրա ատամը մուտ չարեց*—կնշանակի չհամարձակուեց անելու, ինչ որ կամենում էր, ուժը չպատեց: *Աստղ խօսքը* գործ է ածուում և հետևեալ դարձուածքի մէջ. *Նրա աստղը ծուաց, այսինքն, մէկի բաղդը բացուեց:* *Ատամները համրել, կնշանակի և լաւ ճանաչել, զօրութիւնը և ուժը կշռել և ոչ միայն թոյլ կողմը գտնել, ինչպէս մեկնում է պ. Նաւասարդեանը:* *Ծս նրա ատամները համրել եմ*—կնշանակի շատ լաւ եմ ճանաչում: *Արքադ*—բացառապէս խաղողի որդերից կտրատած ճիւղերն են և ոչ առհասարակ կտրատած ճիւղեր: *Բաթէն խօսքը* նոյնպէս առանց օրինակների է դրուած. օրինակ՝ ասում են պարտքդ տուր բաթէն խօսի, որ ասել է, առաջ պարտքդ տուր, յետոյ խօսիր:

Գէլ—գայլ, բայց չկայ ամենասովորական ոճը թէ՛ դէլի գլխին աւետարան կարդացին, ասեց, շուտ արա սուրուն գնաց: Դարաղ նշանակում չի միայն անասունների մի տեսակ հիւանդութիւն, այլ և արհեստ է և կնշանակի կաշուեգործ (գարաղ Թաթուր): Դո՛ր կնշանակի և կենսունակ կամ ժիր (դո՛ր պառաւն) և այլն և այլն:

Լանգառք նշանակում է ոչ միայն ձող, այլ և գաղափարի արտայայտութիւն ունի և գործ է ածւում շատ անգամ և հաւասարակչութիւն խօսքի մտքով: Օրինակ ասում են, որ այս ինչը Լանգառքը պահող մարդ է, այսինքն դրութիւնը պահող մարդ է: Լաւանալ բայը գործ է ածւում ոչ միայն առողջանալու մտքով, այլ և առանձնական մտքով. օրինակ ասում են նրա բանը լաւացելա, այսինքն կարգի է ընկել, յաջողուել է: Ոսնամանի մի տեսակը «Լափչի» չէ, այլ «լափչին» է: Լափել գործ է ածւում և վառնելու մտքով և չկայ բառաբանում այսպիսի հասարակ ոճ թէ ճա իրա ունեցած-չունեցածը լափել ա, այսինքն վառնել է: Լգամ խօսքի մասին ասում են. ճախ լգամը բերնին ա, որ կնշանակի դեռ փոքր է, անկախ չէ, դեռահաս է. լգամը բերնին ա, այսինքն դեռ չի կարողանում թուչել:

Լեղ—լող, բայց ասում են թէ այն ինչ զքը փողի մէջ լեղ ա տալիս, այսինքն հարուստ է, փողի նեղութիւն չունի:

Լէնարեբրան կնշանակի նոյնպէս և մեծախօս (լինառեխ):

Լիղը ոչ միայն չափ է, այլ և փոխարեբրական մտքով կնշանակի լրջութիւն: Օրինակ ասում են՝ տեղդ նստիք, որ լիղը գաս, այսինքն թեթեամիտ մի լինիր: Լիսին—լուսին, բայց չը կայ բառարանում սովորական դարձուածքները. օրինակ՝ լիսինը նորնել ա, այսինքն լուսնի սկիզբն է, նրա լիսինը նորել ա—նրա բողոքը բացուել է: Լնգլնգալ չի նշանակում շարժուել, այլ քայլուածքի (երիչի) մի տեսակն է. գէլը լնգլնգալուն ա ման գալիս: Լօլօլ փոխարեբրական մտքով կնշանակի չնչին բան. էսքան վախտ ա նա երեխուն մի լօլօլ չի տուել, թէպէս ըստ մեծի մասին պատու կնշանակի:

Լօթի ոչ միայն շալլ և վառնող կնշանակի, այլ և ապետական յատկութիւն, անհաշիւ մարդուն էլ են լօթի ասում (օրին. լօթիտես այս ինչ բանը արա), որ կնշանակի առանց հաշուի: Աէ որ Պէպօն էլ լօթի էր: Լօղլօղ—ոչ միայն երկայնահասակ և նիհար մարդուն են ասում լօղլօղ, որպէս բացատ-

բում է հեղինակը, այլ այն մարդուն, որի կազմուածքի մէջ համաշափութիւն չկայ (Լօղլօղ Քաթոսը): *Մաքար* խօսքը գործ է ածուում և հեգնական ոճի մէջ թէ՛ «Մաքարը տարաւ, խաբարը կտանես», այսինքն օգուտ չտեսաւ, օգուտ չի տեսնի: *Մաքարըզան*—իսկապէս բամբաստաւէր կամ լրտես չէ, այլ խառնակիչ լրատու, որին համանիչ բառ է և չուղուլ խօսքը:

*Մանում* խօսքի հետ առում են և «Մանում-խաթուն» կին, որ կնշանակի վեհանձն կին:

*Մալիֆա* ոչ միայն աւագ ուսուցիչն է, այլ և հասարակութեան մէջ յայտնի դիրք ունեցող, յարգելի մարդ, որպէս և գրագէտ: Խալիֆան բոլորովին համապատասխանում է թուրքերի միրզա խօսքին (Միրզա Իւսուֆ, խալիֆա Գրիգոր): *Մէյրաթ* չի նշանակում բարւոք, այլ բարիք, գոհ: Ասում են, այս ինչը խէյրաթ է արել ու մի խալվար ցորեն ա բաժանել քեասիբքիւսուրնեքին:

*Մոզան* խօսքը բոլորովին սխալ է մեկնած և չի նշանակում անմշակ մնացած վարելահող, այլ ցորենի քաղած արտի ցողունների մնացորդը, որի մէջ տաւար են շատ անգամ թողնում արածելու: Սրկրորդ տարին խոզանը կրում է դարախոզան անունը, իսկ երբորդ տարին խամ, եթէ չի ցանուում: Բաց է թողած *հսոր քունը մտնես* անիծելը, որ նոյնպէս շատ տարածուած ոճ է:

*Մորխոզի* չէ, այլ խորխոզին է և չի նշանակում մանր կոտորած և տապակած ճարպը, այլ հալած ճարպի մնացորդը, իսկ կոտորած և տապակած ճարպը կրում է ճիժիվիժի կամ աիժի վիժի անունը:

*Մոյվորիլ* չի նշանակի վախենալ, այլ աւելի շուտ յանկարծ բարկանալ, գժուելու մի տեսակն է: Ասում են՝ մէկ էլ տեսար խոյվորեց կասես սատանէն մտել էր ջանը:

*Ժաղ* ոչ միայն հարսանեաց հանդէսին տուած պարգևն է, այլ պարգև տալու՞թամանակը: Օրինակ՝ ես նրա հարսանիքի ծաղին չմնացի: *Մուճուճ* գործ է ածուում և փոխաբերական մտքով: Ասում են, թնչ ես խուճուճ-մուճուճ գալիս, երբոր մէկը չի կամենում տուած հարցին ուղղակի և դրական պատասխան տալ, այլ աշխատում է ծամծամել պատասխանը կամ գաղել իւր ասելիքը: *Ժիծ*—մօր ծիծ կարող կնշանակի ար-

դարև հարպիկ, բայց վատ մտքով և աւելի շուտ սրիկայ կնշա-  
նակի:

Կլափին անել միմիայն քաղցածութիւնից տանջուել չէ,  
այլ առհասարակ ամեն բանի սաստիկ կարիքից տանջուել: Օրի-  
նակ ասում են՝ փողի համար կլափին ա անում:

Միթէ կարելի է ներել պ. Նաւասարդեանին, որ կճուճ  
բառի մօտ գրուած չէ «կճուճը գլորուեց՝ խուփը գտաւ»  
դարձուածքը, որ ասել է թէ նման մարդը իւր նմանին կամ  
իրան համապատասխան մարդ գտաւ: Կմկմալ բացի կակազել  
նշանակելուց ունի և ուրիշ միտք. մի կմկմացնի, ասում են,  
երբոր մարդ տարտամելով և բացայայտ չի խօսում: Կուչ միայն  
կենդանի չէ: Ասում են, բնչ ես կուչ է կուչ անում, որ կնշա-  
նակի կուացած մանգալով անցնել, իսկ փոխաբերական մտքով  
կնշանակի շողորթի: Մէկի առաջ կուչ է կուչ անել ոճ կայ  
ժողովրդի մէջ: Կնկորելը ունի և փոխաբերական միտք, որ  
կնշանակի հետախոյզ լինել, քննել. բանը շատ չեն կնկորի, աս-  
ում է ժողովուրդը:

Կննատակը ձմերուկ տալ ասել է թէ սուտ գովեստով  
և յոյսերով խաբել և ոչ միայն գովաբանել: Կոնատակերը ձմե-  
րուկ տուեցի ու ճամբու դրի, այսինքն շողորթեցի և խա-  
բեցի:

Կոտնել ունի և փոխաբերական միտք, որ ասել է օգտուել:  
Ղուամարումը նրան կոտնել են,—ասել է թէ խաղի մէջ նորա  
բոլոր փողերը տարել են: Կոթոց աւելի շուտ նախատինք է  
քան թէ յանդիմանութիւն: Կոմքալ ոչ թէ մահակ է, այլ մա-  
հակի կլոր գլուխն է:

Կոռ միմիայն արքունական ձրի ծառայութիւնը չէ, այլ  
առհասարակ ձրի աշխատանք կնշանակի: Սա նրա կոռվորը խօ-  
չեմ, ես նրա կոռը շատ եմ քաչել և այլն:

Հալ—գրութիւն, բայց հալ և գործիք է, որով հարթում  
են ցորենի չափի երեսը, որպէս զի չափը ուղիղ գայ: Այստե-  
ղից առաջացել է և հալ քաչել, հալ քաչող խօսքերը: Երբոր  
ամառը վանքապատեկան գիւղերում կալաչափերը շրջում են  
կալերը բահրան ստանալու, նրանք իրանց հետ ունենում են  
և հալ քաչող: Նոյնպէս շատ գործադրելի ոճ է հալից ընկնել,  
որ կնշանակի ուժասպառ լինել թէ նիւթապէս և թէ ֆիզիքա-  
պէս առհասարակ: Միհանքի—միտնգամից չէ նշանակում, այլ

չարունակաբար. նա միհանքի սուտա խօսում—այսինքն շարունակաբար:

Միանգամայն զարմանալի է, որ պ. Նաւասարդեանի պէս հմուտ բարբառագէտը շատ անգամ տարրական խօսքերի բացատրութիւնը սխալ կամ կիսատ է տալիս: Եւ աչքերիս չը հաւատացի, երբ կարդացի *հաշտ* և *դաղաք* խօսքի բացատրութիւնը: Հաշտ խօսքի ամենապարզ նշանակութիւնը չկայ բառարանի մէջ, որ կնշանակի համերայիս, հաշտ լինել, հաշտութիւն գցել և այլն: Դաղաք միթէ կտաւ է նշանակում: Զէ որ դաղաքը մեծ մասամբ սև, կապոյտ կամ կանաչ գոյնով ներկած միակալն է, որից գիւղացիք արխալուխ կամ շապիկ են կարում: *Ղաղը*— կնշանակի արժէք, նշանակութիւն և ապա պատիւ կամ յարգանք: Իմ դաղըը չիմացար ասել է թէ իմ արժէքը չիմացար: *Ղաթի* բոլորովին փայծաղ չէ, այլ փայծաղի մեծանալն է, որ հիւանդութիւն է: Ասում են մարդու կամ երեխայի մասին թէ դաթի ունի, այսինքն փայծաղը մեծացած է: *Ղաշխա*— փոխաբերական միտք էլ ունի, երբ որ մարդու մասին են ասում, դաշխա մարդ կնշանակի ստահակ, ճակատաւոր, կռուաբար մարդ:

*Ղասաք* նոյնպէս մարդու մասին գործադրելիս ոչ միայն մտազործ է, այլ և դասաբ մարդ ասում են արիւնարբու և մարդասպան մարդուն: *Ղարիքանոց* ոչ մի տեղ Աբարատի դաշտում չի նշանակում օտարերկրացիների հիւրանոց, այլ վաղարշապատում օտարերկրացիների, այլ ոչ բնիկների, գերեզմանոց է: *Ղափարթմիշ* անել նոյնպէս ճիշտ չէ մեկնած և չի նշանակում կերակրով լի պղինձը թոնրի վրայ դնել և փելու: *Ղափարթմիշ* անել ընդհանուր միտք ունի և կնշանակի նախ յանկարծ վրայ հասնել, վրէժն կտրել բռնելու մտքով, իսկ նոյնպէս կնշանակի բոլորովին ծածկել: Օրինակ թոնրի բերանը դափարթմիշ անել ասել է այնպէս փակել թոնրի բերանը, որ ոչ մի տեղից բաց դուրս չգայ: *Ղչլըուռուն* ոչ մի կերպ չի կարող լինել սևի տեսակը, այլ բառացի թարգմանութեամբ կնշանակի կարմրաուռն, կարմրագունն:

*Ղո* ունի և այլ միտք, որ ասել է անարատ և անմշակ հող և ոչ միայն քարքարոտ հող: *Ղիամաթ*— սառնամանիք, բայց ժողովուրդը զիամաթ փոխաբերական մտքով ասում է տագնապալից բոսպէին, դժուար դրութեանը— օրինակ՝ զիամաթ հօ չելաւ գլխիդ, այսինքն միթէ չկարողացար ելք գտնել:

Ղուփնը — քորել, բայց չէ որ դուփել կնշանակի և յափշտակել: Ծրթ առհասարակ ասում են մանուֆակտուրին: Մաղա ոչ միայն ախորժակ, այլ և կաքաւի էզը նոյնպէս մաղա է: Մաթալ մնալ ոճը դեռ յուսահասուել չի նշանակում, այլ շիւարած լինել, երկբայութեան կամ դժուար դրութեան մէջ լինելն է, անելիքը չգիտենալն է: Մախաթ ասում են և անձնաւորութեան մասին, մախաթ մարդա—այսինքն իր ասածի մարդ է, անընկճելի է: Մարխոշ—իսկապէս գոյական անուն չէ և ոչ էլ խնձորի տեսակը, այլ համ է և կնշանակի թթուաշ, բայց և խնձորի մի տեսակին ասում են մարխոշ խնձոր: Միմիայն մարխոշ խօսքը ինքնըստինքեան խնձոր չէ: Միթէ չորացրած ծիրանից եփած կերակուրը, եփած չիրը չի կարող մարխոշ համ ունենալ և այլն և այլն: Մթնածիրոք դեռ սաստիկ մութ չէ, այլ մթնաւուն: Մօվրովը ոչ ջրբաժան է և ոչ գաւառապետ, այլ հին ժամանակներում էջմիածնի կալուածների կառավարիչներին մօվրով էին ասում, իսկ ժողովուրդը յետոյ մօվրով կառավարիչ խօսք մտքով էլ էր գործածում: Բոլորովին բացատրուած չէ մթնածեծ աննը, որ նոյնպէս շատ գործածական է: Մթնածեծ անել կնշանակի մի բան գաղտնի անել, շտապով վերջացնել: Մուշտուլուղ—աւետիք չէ, այլ սուած աւետիքի, ուրախ լուր բերողի վարձն է:

Ութուլ ո՛ր թոյն է և ոչ անշնորհը, այլ ծոյլ, դանդաղ կոտ:

Ուրիան իսկապէս կը նշանակի մերկ, լափ ուրիան ա դառել, ասել է աղքատութիւնից մերկացել է: Չաթու-պարան, բայց ասում են շատ չաթուքեասան մարդ է—այսինքն մասնագէտ սրիկայ է: Չալթուկը ախ կեղեից չմաքրած բրինձն է, բայց և բրինձի արտն է, որպէս բացատրած է բառարանում: Սրբ որ որ ասում են՝ թէ այս ինչը գնացել ա չալթուկ առնելու, խօսք չի կարելի հասկանալ թէ բրնձի արտ առնելու: Չարդախը ոչ միայն թոնրի վրայի ծածկուած չինութիւնն է, այլ և առհասարակ կուրը միայն ծածկուած չինութիւն, որի մի կամ մի քանի կողմը առանց պատի է, բաց է (ԵԱՅԵՅԵ): Պուլիկ—փոքրիկ աման, բայց ժողովուրդը ունի և պուլիկ գցել ոճը, երբ բացառապէս թոքերի բորբոքումով հիւանդների մէջքին (սանթլիամի) պուլիկ են գնում արեան շարժում առաջ բերելու համար: Ջիզնար բոլորովին փայծաղը չէ, այլ լիարգը, սպիտակ թոքը և սիրտը միասին կազմում են չիզնարը: Մար-

գու մասին էլ են ասում ջիգեարով—սրտոտ մարդ, քաջ մարդ, նոյնպէս և բարեկամասէր: Միմիայն նրանով կարելի է բացատրել, որ պ. Նաւասարդեանը բաց է թողել *Ջուռիաթ* խօսքը և սրա նման բազմաթիւ ոճեր, որովհետեւ բառարանը կազմելու կամ տպագրութեան տալու ժամանակ բուն երկրումը չի եղել: *Ջուռիաթ* կնշանակի քաջութիւն, վստահութիւն (Չուռիաթով մարդա): *Ռաշիդ* միայն կտրիչ չէ, այլ և առատաձեռն հիւրասէր, մինչև անգամ գթոտ մարդ: Այս խօսքը պատահում է և հեզնական մտքով գործածուելիս: Ժլատ մարդու մասին էլ հեզնօրէն ասում են՝ տօ ինչ ուաչիդ մարդ ա: *Ռաստ*—չկայ բառարանում ուստ գալ ոճը, ուստ գալից կտրուէր, այսինքն երանի չպատահէի: *Սախաթել*—փոխաբերական մտքով սախաթուել կընշանակի չափից, կանոնից ընկնել: Սթէ տան պատը ծուռն է գրուած՝ ասում են տունը սախաթուեց, մի գլխարկացու մորթին եթէ կարուած լինի՝ ասում են մորթին սախաթուել է և այլն և այլն:

*Սաղլիկ* ասում են և մարդու մասին, որ կնշանակի ոչ լուրջ մարդ:

*Սլլալ* իսկապէս կնշանակի գաղտնի կերպով հեռանալ, անհետանալ, որ համանիչ է ծլկուել ժողովրդական ոճին: Ասում են նոյնպէս քամին սլլումա—մեղմ կերպով փչում է: *Սուտ* բառը յաճախ պատահում է սուտն ի հօրէ սատանայ է՝ դարձուածքի մէջ, որ ասել է սուտ ասողը սատանի ծնունդ է: *Ստերջ* և ոչ ստերջ՝ չի նշանակի չբեր կով, այլ ծնած կով, որ մի որ և է տարի չի ծնում և չծնած տարին կովին ստերջ են ասում: Շատ սովորական ոճ է՝ այս տարի մեր կովը ստերջ է մնացել: *Քնել* բայի մօտ չկայ ամենասովորական անէծքը—խոր քունը քնես, այսինքն մեռնես: *Քաշ* ծանրութիւն էլ է, բայց իբրև ածական է պատահում ցածր, արժէք չունեցող, ստոր գաղափարի մտքով: Օրինակ ասում են քաջ մարդ—ստոր մարդ, քաջ ապրանք ցածր ապրանք: *Քաշել* ունի և զրկելու, գողանալու միտք: Օրինակ՝ ասում են օպեկունը հրբերից շատ բան ա քաշել տակովն արել: *Քարհելից անել* իսկապէս չի նշանակի քարկոծել, այլ քար բցելով փախցնել, հալածել քարերով (չանը քարհեկեց արեցի): *Քարգահը* ձեռագործութիւն կամ անեղնագործութիւնը չէ, այլ այն գործիքն է, որի վրայ արւում է ձեռագործը. օրինակ ասում են՝ ձեր քարգահը զրկիր բասպինդ պտի գործիմ: *Քարփինջ* խօսքի հետ կան զանազան

ոճեր. մէկի քարփինջ ջուրը դնել—մէկի գործը փչացնել: *Քեալ-շան* բոլորովին ամայի դաշտ չէ, այլ վարուցանքի տեղ և նոյն. պէս հնձած, բայց դեռ չժեծած ցորենը: Ասում են էս տարի մեր քեալշանը լաւ ա—մեր վարուցանքը կնշանակի մեր եզները դեռ քեալշան են կրում: *Քեշա*—թաղիք, բայց չկայ և քեշոտել ոճ. ջանս քեշոտել ա այսինքն մարմինս սաստիկ կեղտոտել է: *Քէֆ*—քէֆը չաղ է ասում են հարբելու մօտեցած մարդուն: Նոյն ոճը և ասում են հարուստ մարդու մօտին թէ նրա քէֆը չաղա: *Քիքեր* ոչ միայն ազգական կանանց, այլ առհասարակ իրանից մեծ կնոջը քիքեր են ասում: *Քոշառ* խոշոր յարդ չէ, այլ կիսածեծ հասկ, որի մէջ դեռ ցորեն է մնացել: *Քեար* կնշանակի և դեղ, միջոց:

*Քրէդար* ոչ միայն բեռնակիր կենդանիներ վարձու տրւողն է, այլ և վարձողը ինքը: Օրինակ՝ ես քրէդար եմ այս ինչի տանը: *Քոչի*—գուռնի եղանակ, բայց ածում են ոչ թէ հարսը տանելու ժամանակ, այլ երբոր հարսանիքաւոր հիւրերը պէտք է գնան: Սրբ քոչին ածում են, նշանակում է հարսանիքը վերջանում է: *Քոքանալ* ունի և փոխաբերական նշանակութիւն: Այս ինչ մարդու քէֆը քոքա—այսինքն, վիճակը լաւ է, հարուստ է և այլն: *Փալ բաց անողը* գրբաց չէ, որովհետեւ ֆալչին գրի հեռ գործ չունի, նա գուշակում է արտաքինով միայն: *Փոքի*—հոգի, բայց չկայ փողից ֆոքի կորու, ֆոգից ֆոքի կորչում ա—այսինքն աղքատացաւ, ոչնչացաւ: *Փոտ*—հոտ, ինչ ֆոտած մարդ ա—այսինքն վատ մարդ է, անբարիշտ է, մարդատեաց և այլն և այլն:

Բառարանի թերութիւններից մէկ էլ այն է, որ թուրքերէն բառերի և ոճերի մօտ նշանակած չկայ թէ ինչ խօսք թուրքերէն է, որպէս չի կարելի լինի ջոկել բուն հայերէն ժողովրդական բառերը և ոճերը: Նոյնպէս պէտք է նկատել որ Վաղարշապատի բարբառը սխալ է իսկական Արարատեան բարբառի տեղ ընդունել, որովհետեւ Աշտարակի օրինակ բարբառը թերեւս աւելի մաքուր է քան Վաղարշապատինը, բայց սաստիկ տարբերում է իւր ձևերով:

Մենք գիտութեամբ կանգ առանք մի քանի բաց թողած բառերի և դարձուածքների վրայ, որոնք ապագայում կարող են օգտակար լինել հեղինակին, բայց ինչ խօսք, որ բառարանը ունի մի քանի հազար բառերի և ոճերի ստոյգ մեկնութիւն և այս բառարանը աշխարհաբառ լեզուի ուսումնասիրողի հա-

մար շատ մեծ գին ունեցող աշխատութիւն է: Չի կարելի չը  
ցանկալ, որ մեր հարուստները գէթ սրանից յետոյ հասկանա-  
լին գրի և գրականութեան նշանակութիւնը և իրենց բարե-  
գործութիւնից բաժին հանէին ազգային գրականութեան և  
գրագէտներին, որ գուցէ աւելի ուղիղ կլինէր և օգտակար:  
Այն ժամանակ ուրիշներն էլ կը կարողանային ուսումնասիրել  
մեր գաւառաբարբառները, իսկ սլ. Նաւասարդեանը գուցէ և  
կարողանար բոլորովին նուիրուել իւր մանկութիւնից սիրուած  
գործին:

Գար. Յնգ.